

— Սաւաւանեանց հրատարակած է նաև իր կենսագրութիւնը 1900ին Գահիրէի մէջ, Կենսագրական յուշեր խորագրով. մենք մեծ մասամբ անկէ քաղեցինք իր կեանքի համառօտ այս գլիծերը:

ՏԻՄՈԹԷՈՍ ԵՊՍ. ՍԱՓՐԻՉԵԱՆ, ՊՈԼՍԵՅԻ. — Մք. Ծ. 1822 ին. Զո. 1857ին: Ըստ իր յիշատակարանին (ՄԶ. Թ. 251) «Կը վարէ գանձապետութեան պաշտօնը երեք տարի, Յովհաննէս պատրիարքի ժամանակ կոնդակագիր, կը վարէ նաև մատակարարութեան, հիւրընկալութեան եւ Աղեքսանդրիոյ կալուածոց տեսչութեան պաշտօնները եւ մէկ տարի ալ կ'անդամակցի ՏՆ. ժողովոյ, եւ ապա եթովպիա»։ 1878 ին եպս. կը ձեռնադրուի Ս. էջմիածին: Եսայի պտրք.ի հրամանով և որոշմամբ Միաբանութեան անգղիացի հպատակներու ազատութեան համար Բաբերդցի Սահակ եպս.ի հետ ուղեւորած է Հապէշխտան եւ այս ուղեւորութեան առթիւ գրի առած է հապէշ ժողովրդեան կրօնական, ընտանեկան և վարչական սովորութիւնները և 1871ին հրատարակած է Ս. Աթոռի տպարանէն Երկամեայ պակնիստրիոն ի Հայկիչիսան գործը: Սոյն գիրքը թարգմանուած է Ֆրանսերէնի եւ Եսայի պտրք.ին կողմէն ընծայ զրկուած է Անգղիոց Վիքթորիա կայսրուհիին, որ արտաքին գործոց նախարարին միջոցաւ կը յայտնէ իր շնորհակալութիւնը. տեսնել մանրամասնութիւնները (Սիօն, 1872, էջ 165): Տիմոթէոս եպս.ի այս գիրքը թարգմանուած է նաև գերմաներէն ա'յն Հայկական Մասկնայառանի մէջ որ հրատարակուած է Աբգար Յովհաննէսեանի տեսչութեամբ, Վիլհէլմ Ֆրեարիխի կողմէն, Լայպցիկի մէջ, (տե՛ս Ոհրլ. էջ 274): Տիմոթէոս եպս. կը մեկնի Ս. Յակոբի վանքէն ու կը վարէ զանազան քարոզչական եւ առաջ. պաշտօններ, վախճանած է Պոլիս, ալեւորեալ հասակի մէջ:

ՏԻՐԱՆ ԱԲ. Տ. ՆԵՐՍԷՍԵԱՆ, ԱՅՆԹԱՊՅԻ. — Մք. Որդի Ներսէս ֆն. Թալուզանի. Ծ. 1904 Օգոս. 23ին Այնթապի մէջ, նախակրթութիւնը առած է իր ծննդավայրը. 1914ին իրեննեւրով տարագրուած է Համայի և Սէլիմիէի կողմերը: 1919ին իր ծնողացը հետ կը վերադառնայ Այնթապ ուր կը շարունակէ իր ուսումը: 1921ին կ'ընդունուի Ժառ. վարժը. 1924ին կը լրացնէ Ժառ. վարժ.ի շրջանը եւ 1924—26ին ուսուցիչ կը կարգուի Երուսաղէմի նախակրթարանին եւ յետոյ Ժառ. վարժ.ին, միև-